| Մարզ | Տեղանքի անվանումը կամ հասցեն | Աղետի տեսակը | ԱԻ առաջացման ամսաթիվ | ԱԻ ավարտման ամսաթիվ | Դեպքի նկարագրությունը | Ձեռնարկված միջոցառումները | Տեղեկատվության սկզբնաղբյուրը | Զոհեր | Վիրավորներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Գյումրի Անի թաղամասում՝ ,Պրիս-տիժե խանութի մոտակայք | հրդեհ | 01.02.2019 ժ.19:40 | 01.02.2019 ժ.20:13 | անձը չպարզված քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Անի թաղամասում՝ ,Պրիս-տիժե խանութի մոտակայքում, այրվում է ավտոմեքենա: | Ժ.19:40-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 48 ՀՓՋ-ի ընդուր պրոֆիլի փրկարար փ/ծ ավագ սերժանտ Մալխասյանին, ժ.19:42-ին՝ ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ Մարգար-յանին, իսկ ժ.21:40-ին՝ ոստիկանության Մուշի բաժի ՕՀ ոստ. մայոր Պապոյանին: Ժ.19:41-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.19:53-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.20:13-ին): Մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը՝ հրդեհը մարվել է տեղի ուժերով: Այրվել են ,Toyota Corollaե մակնիշի A282OH716RUS պ/հ ավտոմեքենայի (վարորդ Արման Խաչատրյան) առջևի հատվածի պլաստմասե դետալները՝ մասամբ | անձը չպարզված քաղաքացուց | 0 | 0 |
| Շիրակ | Աշոցք-Թավշուտ ավտոճանապարհ | արգելափակված ավտոմեքենա | 02.02.2019 ժ.22:37 | 02.02.2019 ժ.22:57 | քաղաքացի Գալստյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Աշոցք-Թավշուտ ավտոճանապարհին ավտոմեքենաներն արգելափակվել են ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.22:42-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը ժ.22:48-ին, անհրաժեշտությունը վերանալու պատճառով վերադարձել է (վերադարձ ՀՓՋ՝ ժ.22:57-ին): Մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելն ավտոմեքենաներն արգելափակումից դուրս է բերվել տեղի ուժերով: | քաղաքացի Գալստյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ,Մսի Կոմբինատե թաղամասի 28/1 տան | շմոլ գազի թունավորման | 04.02.2019 ժ.11:08 | - | ,1-03ե ծառայության բժիշկ Հարությունյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ շմոլ գազից թունավորման նախանշաններով Գյումրու ԲԿ է հոսպիտալացվել ,Մսի Կոմբինատե թաղամասի 28/1 տան բնակիչ Գոհար Մարտիրոսյանը (ծնվ. 1955թ.): Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են բավարար: | - | ,1-03ե ծառայության բժիշկ Հարությունյանից | 0 | 1 |
| Շիրակ | Բագրավան գյուղ 3-րդ փողոցի թիվ 22 տուն | սննդային թունավորում բոտուլիզմի | 05.02.2019 ժ.15:20 | - | Գյումրի քաղաքի ինֆեկցիոն և հակատուբերկուլոզային հիվանդանոցի հերթապահ բուժքույր Դերձակյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ժ.11:15-ին բոտուլիզմի նախանշաններով հիվանդանոց է դիմել Բագրավան գյուղի 3-րդ փողոցի թիվ 22 տան բնակիչ Նիսյա Սարգսյանը (ծնվ.1993թ.): Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության։ | Ժ.15:40-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ,Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնե ՊՈԱԿ-ի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Ուռուտյանին: | ինֆեկցիոն և հակատուբերկուլոզային հիվանդանոցի հերթապահ բուժքույր Դերձակյանից | 0 | 1 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Անի թաղամասի Պարույր Սևակ փողոցի թիվ 15բ շենքի 15-րդ բնակարանի | փակ դուռ | 05.02.2019 ժ.18:18 | 05.02.2019 ժ.19:14 | քաղաքացի Թումասյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Անի թաղամասի Պարույր Սևակ փողոցի թիվ 15բ շենքի 15-րդ բնակարանի դռան փականը խափանվել է, ինչից բնակարան մուտք գործելը դարձել է անհնարին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.18:20-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.18:30-ին (վերադարձին՝ ժ.19:14-ին, մեկնել է այլ կանչի Մ.Խորենացու փողոց): Ժ.18:24-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Աղեկյանին: Ժ.18:46-ին հրշեջ-փրկարարները բացել են Քնարիկ Թումասյանի բնակարանի դուռը: | քաղաքացի Թումասյանից | 0 | 0 |
| Շիրակ | Մովսես Խորենացու փողոցի թիվ 2 շենքի 61-րդ բնակարան | փակ դուռ | 05.02.2019 ժ.19:12 | 05.02.2019 ժ.19:54 | քաղաքացի Թորոյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Մովսես Խորենացու փողոցի թիվ 2 շենքի 61-րդ բնակարանի դուռը փակվել է, 3 տարեկան երեխան մնացել է ներսում. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.19:14-ին նախորդ կանչից (Անի թաղամաս) դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ի մարտական հաշ-վարկը, որը կանչի վայր է հասել ժ.19:25-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.19:54-ին): Ժ.19:36-ին հրշեջ-փրկարարները բացել են Սանասար Վարդանյանի բնակարանի դուռը. ներսում է գտնվել Ժորժիկ Վարդանյանը (ծնվ.2016թ.) | քաղաքացի Թորոյանից | 0 | 0 |
| Շիրակ | Բագրավան գյուղ 3-րդ փողոցի թիվ 22 տուն | սննդային թունավորում բոտուլիզմի | 05.02.2019 ժ.19:30 | - | Գյումրի քաղաքի ինֆեկցիոն և հակատուբերկուլոզային հիվանդանոցի հերթապահ բուժքույր Խաչատրյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ժ.18:30-ին բոտուլիզմի նախանշաններով հրվանդանոց է դիմել Բագրավան գյուղի 3-րդ փողոցի թիվ 22 տան բնակիչ Գուրգեն Սաֆարյանը (ծնվ.1981թ.): Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության: | Ժ.20:00-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ,Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնե ՊՈԱԿ-ի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Ուռուտյանին: | ինֆեկցիոն և հակատուբերկուլոզային հիվանդանոցի հերթապահ բուժքույր Դերձակյանից | 0 | 1 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Կոշտոյան փողոցի թիվ 3 հասցե | հրդեհ | 06.02.2019 ժ.18:11 | 06.02.2019 ժ.18:46 | քաղաքացի Հովհաննիսյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Կոշտոյան փողոցի թիվ 3 հասցեի մոտակայքում ավտոմեքենայից ծուխ է դուրս գալիս: | Ժ.18:11-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.18:15-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.18:46-ին): Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է ,Volkswagen Ventoե մակնիշի 35XX369 պ/հ (սեփականատեր Աննա Հովհաննիսյան) ավտոմեքենայում: Ժ.18:13-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Մուրադյանին:<br>Հրդեհը մեկուսացվել է ժ.18:18-ին, մարվել՝ ժ.18:22-ին: Այրվել է ավտոմեքենայի ցուցիչների վահանակը, սրահը՝ մասամբ, ջերմահարվել՝ դիմապակին: | քաղաքացի Հովհաննիսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Մուշ թաղամասից 58 թաղամաս տանող ճանապարհահատված | տեղեկատվության փոխանցում | 07.02.2019 ժ.13:19 | - | Գյումրի քաղաքի ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. կապիտան Հակոբյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ժ.13:17-ին քաղաքացի Ոսկանյանից ահազանգ է ստացվել այն մասին որ Գյումրի քաղաքի Մուշ թաղամասից 58 թաղամաս տանող ճանապարհահատվածին տեղադրված էլեկտրական սյան վրա նկատվում է կայծեր: | Ժ.13:19-ին հետադարձ կապ է հաստատվել ահազանգողի հետ,և պարզվել է որ տեղի է ունեցել էլեկտրկան լարերի կարճ միացում, կա կտրված էլեկտական լար:<br>Ժ.13:20-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է էլ. ցանցի կարգավար Աղբալյանին: | Գյումրի քաղաքի ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. կապիտան Հակոբյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Մուշ 2/2 թաղամասի 41-րդ շենքի 30-րդ բնակարան | տեղեկատվության փոխանցում | 07.02.2019 ժ.17:38 | - | քաղաքացի Սարգսյանից ահազանգ է ստացվել այն մասին,որ ք. Գյումրի Մուշ 2/2 թաղամասի 41-րդ շենքի 30-րդ բնակարանի բնակիչ մոտ 75 տարեկան միայնակ բնակվող կինը ընկել է իր բնակարանում՝ հատակին,անհրաժեշտ է ՇԲՕ: | ժ.17:40-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ,1-03ե ծառայության կարգավար Գևորգյանին: | քաղաքացի Սարգսյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Գյումրի Պարույր Սևակ 15Ա շենքի 22-րդ բնակարան | տեղեկատվության փոխանցում | 07.02.2019 ժ.23:23 | - | քաղաքացի Մաթևոսյանից ահազանգ է ստացվել այն մասին,որ ք. Գյումրի Պարույր Սևակ 15Ա շենքի 22-րդ բնակարանում տեղի է ունեցել էլեկտրական լարերի կարճ միացում.վնասվել է էլ. լարերը՝ բնակարանը հոսանքազրկված է: | ժ.23:24-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է էլ. ցանցի կարգավար Ասատրյանին: | քաղաքացի Մաթևոսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Կասյան փողոցի թիվ 13 տան մոտակայք | արգելափակված ավտոմեքենա | 08.02.2019 ժ.00:45 | 08.02.2019 ժ.01:00 | քաղաքացի Պետոյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Կասյան փողոցի թիվ 13 տան մոտակայքում շտապօգնության ավտոմեքենան արգելափակվել է ջրափոսում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.00:47-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ի ՕԽ-ն՝ փ/ծ ենթասպա Ղազոյանի ղեկավարությամբ (կանչի վայր՝ ժ.00:51-ին, վերադարձ՝ ժ.01:00-ին): Ժ.00:53-ին հրշեջ-փրկարարները ,Fordե մակնիշի 566SU14 պ/հ ավտոմեքենան (վարորդ Սամվել Բաղդասարյան) դուրս են բերել արգելափակումից: | քաղաքացի Պետոյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Տերյան փողոցի թիվ 24 տուն | օգնություն քաղաքացուն | 09.02.2019 ժ.01:54 | 09.02.2019 ժ.02:37 | քաղաքացի Իկիլիկյանից ահազանգ է ստացվել, որ Տերյան փողոցի թիվ 24 տան (բնակիչը բացակայում է) ջրի խողովակը վնասվել է, տեղի է ունենում ջրալցում. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.01:56-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.02:06-ին, (վերադարձ ՀՓՋ՝ ժ.02:37-ին): Ժ.02:00-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Կումայրի բաժնի ՕՀ ոստ. մայոր Բաբաջանյանին: Ժ.02:14-ին հրշեջ-փրկարարները դադարեցրել են Էլիչկա Ստամբոլցյանին պատկանող տան ջրամատակարարումը: | քաղաքացի Իկիլիկյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Գյումրի,իրակացի փողոցի թիվ 58 շենքի բն. 11 | փակ դուռ | 09.02.2019 ժ.15:13 | 09.02.2019 ժ.16:40 | քաղաքացի Պետրոսյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Շիրակացու փողոցի թիվ 58գ շենքի 11-րդ բնակարանի բանալին գտնվում է ներսում, ինչից բնակարան մուտք գործելը դարձել է անհնարին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.15:15-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.15:25-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.16:40-ին): Ժ.15:15-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Աղեկյանին: Ժ.16:22-ին հրշեջ-փրկարարները բացել են Ավետիք Պետրոսյանի բնակարանի դուռը: | քաղաքացի Պետոյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի, 8-րդ զինվորական թաղամասի թիվ 7 շենք, բն. 4 | փակ դուռ | 10.02.2019 ժ.01:10 | 10.02.2019 ժ.01:45 | քաղաքացի Կորնիենկոյից ահազանգ է ստացվել այն մասին, որ 8-րդ զինվորական թաղամասի թիվ 7 շենքի 4-րդ բնակարանի դռան փականը խափանվել է, բնակիչները մնացել են ներսում. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.01:12-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.01:23-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.01:45-ին): Դուռը բացվել է տեղի ուժերով: | քաղաքացի Կորնիենկոյից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Ղարիբջանյան փողոցի 17 տուն | տեղեկատվության փոխանցում | 10.02.2019 ժ.16:33 | - | քաղաքացի Ղազարյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Գյումրի քաղաքի Ղարիբջանյան փողոցի 17 տան նկուղում տեղադրված մաքուր ջրի խողովակը վնասվել է՝ ջուրը անարգել լցվում է տան նկուղ: | Ժ.16:35-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ջրամատակարարաման բաժնի պետ Վարոսյանին: | քաղաքացի Ղազարյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Խարկով գյուղից դեպի ՌԴ սահմանապահ զորքերի թիվ N ուղեկալի ավտոճանապարհ | արգելափակված ավտոմեքենա | 10.02.2019 ժ.18:45 | 10.02.2019 ժ.20:58 | քաղաքացի Եղյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Խարկով գյուղից դեպի ՌԴ սահմանապահ զորքերի թիվ N ուղեկալ ավտոճանապարհին ավտոմեքենան արգելափակվել է ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.18:47-ին դեպքի վայր է մեկնել թիվ 51 ՀՓՋ ՕԽ-ն՝ փ/ծ ավագ սերժանտ Գրիգորյանի գլխավորությամբ (կանչի վայր է հասել՝ ժ.19:25-ին, վերադարձ՝ ժ.20:58-ին): Ժ.20:20-ին հրշեջ-փրկարարները և ուղեկալի զինվորներն արգելափակումից դուրս են բերել ,HONDA CR-V‚ մակնիշի 007TT17 պ/հ (վարորդ Ռաֆայել Ղազարյան, 6 ուղևոր) ավտոմեքենան: | քաղաքացի Եղյանից | 0 | 0 |
| Շիրակ | Գյումրի-Բենյամին ավտոճանապարհի 12-րդ կմ ,Կարկաչան‚ ռեստորան | հրդեհ | 10.02.2019 ժ.21:22 | 10.02.2019 ժ.23:55 | քաղաքացի Հակոբյանից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել ,Կարկաչան‚ ռեստորանի շոգեբաղնիքում: | Ժ.21:22-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 48 ՀՓՋ-ի ընդհանուր պրոֆիլի փրկարար փ/ծ ավագ սերժանտ Տոնոյանին, ժ.21:24-ին՝ ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ենթասպա Մելքոնյանին, ժ.21:30-ին՝ ՄՀ և ՏԱՏ պետ Խաչատրյանին, իսկ ժ.21:32-ին՝ ոստիկանության Ախուրյանի բաժնի ՕՀ ոստ. մայոր Աթոյանին: Ժ.21:27-ին դեպքի վայր են մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.21:47-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.23:55-ին): Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Գյումրի-Բենյամին ավտոճանապարհի 12-րդ կմ-ի մոտակայքում գտնվող Հենրիկ Ավագյանին պատկանող ,Կարկաչան‚ ռեստորանի նկուղային շոգեբաղնիքում: Հրդեհը մեկուսացվել է ժ.22:32-ին, մարվել՝ ժ.23:14-ին: Այրվել է շոգեբաղնիքի (մոտ 12 ք.մ) փայտյա կոնստրուկցիաները, նախամուտքի և շոգեբաղնիքի պլաստմասե 2 դուռ: | քաղաքացի Հակոբյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Սարատակ գյուղի դպրոց | հրդեհ | 11.02.2019 ժ.04:58 | 11.02.2019 ժ.08:00 | քաղաքացի Մնացյանից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սարատակ գյուղի դպրոցի դասարաններից մեկում: | Ժ.04:58-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 49 ՀՓՋ-ի հրշեջ-փրկարար փ/ծ սերժանտ Խուրշուդյանին, ժ.05:00-ին՝ ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ենթասպա Մելքոնյանին, ժ.05:03-ին՝ ոստիկանության Արթիկի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Թովմասյանին, ժ.05:05-ին՝ Սարատակ գյուղի գյուղապետ Ղրզոյանին, իսկ ժ.05:06-ին՝ ՄՀ և ՏԱՏ պետ Խաչատրյանին:<br>Ժ.05:00-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.05:16-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.07:51-ին):<br>Ժ.05:01-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից երկրորդ մարտական հաշվարկը, որոնք կանչի վայր է հասել ժ.05:18-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.07:09-ին): Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Սարատակ գյուղի դպրոցի դասասենյակում և տանիքում:<br>Ժ.05:33-ին թիվ 49 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ մայոր Ադամյանը պահանջել է օգնություն՝ երկու ջրատար:<br>Ժ.05:34-ին դեպքի վայր է մեկնել թիվ 51 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.06:09-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.08:00-ին):<br>Ժ.05:36-ին դեպքի վայր օգնության է մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը ժ.05:55-ին, անհրաժեշտությունը վերանալու պատճառով, վերադարձվել է (վերադարձ ՀՓՋ՝ ժ.06:24-ին):<br>Ժ.05:55-ին դեպքի վայր է մեկնել ՄՓՎ ՕԽ-ն՝ փ/ծ գնդապետ Կ.Եղշատյանի գլխավորությամբ (կանչի վայր՝ ժ.06:09-ին, վերադարձ՝ ժ.08:00-ին):<br>Հրդեհը մեկուսացվել է ժ.05:51-ին, մարվել՝ ժ.06:46-ին: Այրվել է տանիքի փայտյա կառուցատարրրերը (մոտ 10 ք.մ), առաջին հարկում գտնվող տնօրենի աշխատասենյակը՝ գույքով (մոտ 30 ք.մ), տնօրենի աշխատասենյակի դուռը, 2 պատուհան, աշխատասենյակին կից 2 դուռ. ջերմահարվել է 2 չհրկիզվող պահարան և 2 պատուհան: | քաղաքացի Մնացյանից | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Արթիկ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարան | օգնություն քաղաքացուն | 11.02.2019 ժ.12:45 | 11.02.2019 ժ.14:34 | քաղաքացի Գասպարյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարանի վատառողջ բնակչին շտապօգնության ավտոմեքենային մոտեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.12:47-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.12:52-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.14:34-ին): Պարզվել է, որ Նունե Գասպարյանը (ծնվ. 1968թ.) պետք է հետազոտվի իր բնակարանում: Դեպքի վայրում են գտնվել շտապօգնության աշխատակիցներ: | քաղաքացի Գասպարյանից | 0 | 0 |
| Շիրակ | Ոսկեհասկ գյուղի 2-րդ փողոցի 56-րդ բնակարան | տեղեկատվության փոխանցում | 12.02.2019 ժ.09:16 | - | քաղաքացի Ներսիսյանից ահազանգ է ստացվել այն մասին,որ Ոսկեհասկ գյուղի 2-րդ փողոցի 56-րդ բնակարանի բնակիչ՝ Բավական Ներսիսյանը ունի առողջական խնդիրներ, անհրաժեշտ է ՇԲՕ: | ժ.09:19-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է Ախուրյանի ,1-03ե ծառայության կարգավար Կարապետյանին: | քաղաքացի Ներսիսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք.Գյումրի Շահումյան փողոցի թիվ 188 շենքի 99-րդ բնակարան | կանչ առանց հրդեհի | 12.02.2019 ժ.11:00 | 12.02.2019 ժ.11:40 | քաղաքացի Մանվելյանից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Շահումյան փողոցի թիվ 188 շենքի 99-րդ բնակարանում: | Ժ.11:00-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 48 ՀՓՋ-ի պարամեդիկ փ/ծ սերժանտ Կիրակոսյանին, ժ.11:02-ին՝ ՄՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ լեյտենանտ Թևանյանին, իսկ ժ.11:06-ին՝ ոստիկանության Կումայրի բաժնի ՕՀ օգնական ոստ. մայոր Բաբաջանյանին: Ժ.11:01-ին դեպքի վայր են մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ, որոնք կանչի վայր են հասել ժ.11:09-ին (վերադարձ ՀՓՋ համապատասխանաբար՝ ժ.11:27-ին և ժ.11:40-ին): Պարզվել է, որ թիվ 11 շքամուտքի էլ. հաշվիչների վահանակում տեղի է ունեցել կարճ միացում՝ առանց հրդեհի բռնկման: Ջերմահարվել է 3 էլ.հաշվիչ: | քաղաքացի Մանվելյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Գյումրի Պ.Սևակի փողոցի թիվ 13 շենքի 167-րդ բնակարան | փակ դուռ | 12.02.2019 ժ.17:52 | 12.02.2019 ժ.18:31 | քաղաքացի Մնոյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Պ.Սևակի փողոցի թիվ 13 շենքի 167-րդ բնակարանի դռան փականը խափանվել է, բնակիչները մանացել են ներսում. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.17:53-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.18:06-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.18:31-ին): Ժ.18:57-ին հրշեջ-փրկարարները բացել են Անահիտ Մնոյանի (ծնվ. 1980թ.) վարձակալած բնակարանի դուռը: | քաղաքացի Մնոյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Արթիկ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարան | օգնություն քաղաքացուն | 12.02.2019 ժ.16:25 | 12.02.2019 ժ.17:31 | Արթիկի ԲԿ-ի տնօրեն Մարտիրոսյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարանի վատառողջ քաղաքացուն շտապօգնության ավտոմեքենային մոտեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.16:27-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.16:30-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.17:31-ին): Պարզվել է, որ Նունե Գասպարյանին (ծնվ.1968թ.) հնարավոր չէ տեղավորել շտապօգնության ավտոմեքենայի մեջ: | Արթիկի ԲԿ-ի տնօրեն Մարտիրոսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի,Մուշ 2/2 թաղամասի թիվ 50 շենքի 20-րդ բնակարան | փակ դուռ | 13.02.2019 ժ.09:06 | 13.02.2019 ժ.09:41 | Մուշ 2/2 թաղամասի թիվ 50 շենքի 20-րդ բնակարանի դռան փականը խափանվել է, բնակիչը մնացել է ներսում. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.09:08-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ ենթասպա Հարությունյանին: Ժ.09:11-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.09:22-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.09:41-ին): Ժ.09:29-ին հրշեջ-փրկարարները բացել են Հրանուշ Կարապետյանի բնակարանի դուռը: | քաղաքացի Վիրաբյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Արթիկ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարան | օգնություն քաղաքացուն | 13.02.2019 ժ.12:04 | 13.02.2019 ժ.19:56 | Արթիկի ԲԿ-ի տնօրեն Մարտիրոսյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ Անկախության փողոցի թիվ 14 շենքի 6-րդ բնակարանի վատառողջ և ծանրաքաշ բնակչին 4-րդ հարկի իր բնակարանից իջեցնելու և շտապօգնության ավտոմեքենային մոտեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.12:05-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.12:11-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.19:56-ին): Ժ.19:51-ին հրշեջ-փրկարարները իջեցրել և շտապօգնության ավտոմեքենային են մոտեցրել Նունե Գասպարյանին (ծնվ.1968թ.), ով հոսպիտալացվել է Գյումրու ԲԿ: | Արթիկի ԲԿ-ի տնօրեն Մարտիրոսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի բժշկական կենտրոն | օգնություն քաղաքացուն | 13.02.2019 ժ.20:21 | 13.02.2019 ժ.21:13 | թիվ 49 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ մայոր Ադամյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ծանրաքաշ և վատառողջ քաղաքացուն շտապօգնության ավտոմեքենայից Գյումրի քաղաքի ԲԿ տեղափոխելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ20:23-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.20:29-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.21:13-ին): Ժ.20:44-ին հրշեջ-փրկարարները Նունե Գասպարյանին (ծնված 1968թ) ցուցաբերել են համապատասխան օգնություն: | թիվ 49 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ մայոր Ադամյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Բասեն գյուղի 2-րդ փողոցի թիվ 13 տան մոտակայքում | հրդեհ | 14.02.2019 ժ.14:58 | 14.02.2019 ժ.18:28 | քաղաքացի Մելքոնյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Բասեն գյուղի 2-րդ փողոցի թիվ 13 տան մոտակայքում այրվում է անասնագոմ: | Ժ.15:01-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Ախուրյանի բաժնի ՕՀ-ի օգնական ոստ. ավագ ենթասպա Հարությունյանին: Ժ.15:02-ին դեպքի վայր է մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.15:12-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.18:28-ին): Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է 2-րդ փողոցի թիվ 16 տան բակում գտնվող անասնագոմ: Ժ15:15-ին թիվ 53 ՀՓՋ-ի հերթափոխի պետ փ/ծ ենթասպա Մարտիկյանը պահանջել է օգնություն՝ մեկ մարտական հաշվարկ: Ժ.15:16-ին դեպքի վայր է մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից երկրորդ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.15:35-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ. 16:59-ին): Ժ.15:57-ին թիվ 53 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ մայոր Սերոբյանը պահանջել է օգնություն՝ մեկ մարտական հաշվարկ: Ժ.15:58-ին դեպքի վայր է մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից երրորդ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.16:15-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ. 16:59-ին): Հրդեհը մեկուսացվել է ժ.16:39-ին, մարվել՝ ժ.17:27-ին: Այրվել է Աղասի Դալլաքյանին պատկանող անասնագոմի տանիքի ծածկը, փայտյա կառուցատարրերը՝ մոտ 90 ք.մ և 1000 հակ պահեստավորված անասնակեր: | քաղաքացի Մելքոնյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Գյումրի-Բավրա ավտոճանապարհին՝ ,Ղոչի աղբյուրե կոչվող հատվածում | արգելափակված ավտոմեքենա | 18.02.2019 ժ.02:36 | 18.02.2019 ժ.05:00 | քաղաքացի Ամիրխանյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Գյումրի-Բավրա ավտոճանապարհին՝ ,Ղոչի աղբյուրե կոչվող հատվածում ավտոբուսը (26 ուղևոր) մերկասառույցի պատճառով չի կարողանում շարունակել ընթացքը. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.02:35-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.02:52-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.05:00-ին): Ժ.04:40-ին հրշեջ-փրկարարները ,SETRAե մակնիշի XU441UX պ/h ավտոբուսը դուրս են բերել ճանապարհի երթևեկելի հատված: | քաղաքացի Ամիրխանյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Մարալիկ Շիրազի փողոցի թիվ 25 շենքի 17-րդ բնակարան | փակ դուռ | 18.02.2019 ժ.13:22 | 18.02.2019 ժ.13:57 | քաղաքացի Աղատուրյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Շիրազի փողոցի թիվ 25 շենքի 17-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան թակոցներին և հեռախոսազանգերին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.13:25-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Մարալիկի բաժին ՕՀ ոստ. ենթասպա Մադաթյանին, իսկ ժ:13:40-ին՝ շտապօգնության հերթապահ Բաղդասարյանին: Ժ.13:25-ին դեպքի վայր է մեկնել թիվ 51 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.13:31-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.13:57-ին): Ժ.13:38-ին հրշեջ-փրկարարները բացել են բնակարանի դուռը և ննջասենյակում՝ մահճակալին, հայտնաբերել վատառողջ Լիա Հարությունյանին (ծնվ.1947թ.), ում շտապօգնության աշխատակիցները ցուցաբերել են համապատասխան բուժօգնություն: | քաղաքացի Աղատուրյանից | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Աշոցք-Արփա լիճ ավտոճանհապարհ | արգելափակված ավտոմեքենա | 18.02.2019 ժ.23:47 | 19.02.2019 ժ.00:02 | քաղաքացի Մովսիսյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Աշոցք-Արփա լիճ ավտոճանհապարհին ավտոմեքենա է արգելափակվել ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.23:50-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը ժ.00:02-ին, անհրաժեշտությունը վերանալու պատճառով, վերադարձվել է (վերադարձ ՀՓՋ՝ ժ.00:18-ին): Ավտոմեքենան արգելափակումից դուրս է բերվել տեղի ուժերով: | քաղաքացի Մովսիսյանից | 0 | 0 |
| Շիրակ | Մուսաելյան գյուղի ավտոճանապարհ | արգելափակված ավտոմեքենա | 19.02.2019 ժ.04:23 | 19.02.2019 ժ.05:38 | քաղաքացի Գասպարյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Մուսաելյան գյուղի ավտոճանապարհին ավտոմեքենա է արգելափակվել ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.04:27-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.04:40-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.05:38-ին): Ժ.05:14-ին հրշեջ-փրկարարներն արգելափակումից դուրս են բերել ,Mersedes benz C180ե մակնիշի 14GG050 պ/հ (վարորդ Հարություն Գասպարյան) ավտոմեքենան (2 ուղևոր): | քաղաքացի Գասպարյանից | 0 | 0 |
| Շիրակ | Վարդաղբյուր-Գյումրի ավտոճանապարհ | տեղեկատվության փոխանցում | 19.02.2019 ժ.23:30 | - | քաղաքացի Գրիգորյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Վարդաղբյուր-Գյումրի ավտոճանապարհին մեծ բեռնատար ավտոմեքենան ☐ֆուռ☐ դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից,պոկվել է կցորդիչը ՝գլորվել ձորը : Վարորդի կյանքին վտանգ չի սպառնում: | Ժ.23:32-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՃՈ ՕՀ ոստ. կապիտան Ղազարյանին, ժ.23:34-ին ՇՄ ԱԱԾ ենթասպա Սաֆարյանին, ժ.23:36-ին Սարապատ համայնքի ղեկավար Մանուկյանին, ժ.23:38-ին ոստիկանության Աշոցքի բաժնի ՕՀ-ի ոստ. կապիտան Կարապետյանին: Պարզվել է որ RENAUT մակնիշի ☐ VT 247 TV պ/հ ☐ վարորդ ՝ Զաոինդա Գիորգի բեռնատար ավտոմեքենան Բավրա-Գյումրի ավտոճանապարհի 19-րդ կմ-ին երթևեկելի հատվածից դուրս է եկել.պոկվել է կցորդիչը՝ գլորվել ձորակը: Ժ. 23:44-ին Աշոցքի ՈԲ ՕՀ ոստ. կապիտան Կարապետյանից տեղեկատվություն է ստացվել որ կազմակերպվել է համապատասխան միջոցներ ավտոմեքենան դուրս բերելու համար: | քաղաքացի Գրիգորյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Թավշուտ-Աղվորիկ ավտոճանապարհ | արգելափակված ավտոմեքենա | 20.02.2019 ժ.03:29 | 20.02.2019 ժ.04:45 | քաղաքացի Սիրականյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Թավշուտ-Աղվորիկ գյուղի ավտոճանապարհին ավտոմեքենան արգելափակվել է ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.03:32-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.03:42-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.04:45-ին): Ժ.03:33-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՃՈ ՕՀ ոստ. կապիտան Ղազարյանին: Ժ.04:17-ին հրշեջ-փրկարարներն արգելափակումից դուրս են բերել ,Opel Vectra‚ մակնիշի JJ-189-IJ պ/հ (վարորդ՝ Վլադիկ Մկրտչյան) պատկանող ավտոմեքենան (4 ուղևոր): | քաղաքացի Սիրականյանից | 0 | 0 |
| Շիրակ | գ. Առափի | սողանքի վտանգ | 20.02.2019 ժ.11:16 | 20.02.2019 ժ.13:52 | ԱԻՆ ՃԿԱ կենտրոնում տեղադրված սողանքների իրական ժամանակում մշտադիտարկման և մոնիտորինգի ավտոմատ համակարգից ազդանշան է ստացվել այն մասին, որ ժ.11:10-ին Շիրակի մարզի Առափի տեղամասում ՎԷ2 (Վերգետնյա էքստենսաչափ-2) 1 ժամում տեղաշարժը կազմել է 6.3 մմ, որը գերազանցել է տագնապային արժեքի 4 մմ սահմանաչափը: | Ժ.11:20-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՓԾ ԲՆԱՀՎԿՎ պետի տեղակալ փ/ծ գնդապետ Տ. Գիդաչյանին, ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ Հովհաննիսյանին և Առափիի համայնքապետ Ալբերտ Այվազյանին: Ժ.12:00-ին դեպքի վայր է մեկնել ՄՃԿԿ ՕԽ-ն՝ փ/ծ փոխգնդապետ Հովսեփյանի գլխավորությամբ (կանչի վայր՝ ժ.12:18-ին, վերադարձ՝ ժ.13:52-ին): Համայնքի ռելիեֆի և բնակելի շենք, շինությունների ակնադիտական ուսումնասիրության արդյուն-քում վտանգավոր փոփոխություններ չեն արձանագրվել: | սողանքների իրական ժամանակում մշտադիտարկման և մոնիտորինգի ավտոմատ համակարգից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | գ. Առափի | սողանքի վտանգ | 20.02.2019 ժ.17:45 | - | ԱԻՆ ՃԿԱ կենտրոնում տեղադրված սողանքների իրական ժամանակում մշտադիտարկման և մոնիտորինգի ավտոմատ համակարգից կրկին անգամ ազդանշան է ստացվել Առափի ՎԷ2 տեղամասում տեղաշարժի վերաբերյալ, որը կազմել է 1 ժամում 9.6 մմ, որը գերազանցել է տագնապային արժեքի 4 մմ սահմանաչափը: | Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՓԾ ԲՆԱՀՎԿՎ պետի տեղակալ փ/ծ գնդապետ Տ. Գիդաչյանին և ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ Հովհաննիսյանին, ով հաղորդեց, որ ազդանշանի պատճառ են հանդիսացել համակարգի ձոպանի փոխարինման աշխատանքները։ | սողանքների իրական ժամանակում մշտադիտարկման և մոնիտորինգի ավտոմատ համակարգից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի, Ջիվանի փողոց, թիվ 9 տուն | փակ դուռ | 21.02.2019 ժ.15:07 | 21.02.2019 ժ.15:37 | քաղաքացի Սարգսյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Ջիվանի փողոցի թիվ 9 տան վատառողջ բնակիչը չի արձագանքում հեռախոսազանգերին և դռան թակոցներին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.15:09-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.15:16-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.15:37-ին):<br>Ժ.15:10-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ,1-03ե ծառայության կարգավար Գալստյանին, իսկ ժ.15:15-ին՝ ոստիկանության Կումայրու բաժնի ՕՀ ոստ. մայոր Սարգսյանին:<br>Ժ.15:23-ին հրշեջ-փրկարարները բացել են Սահականուշ Սարգսյանի (ծնվ.1947թ.) տան դուռը և լոգարանում հայտնաբերել վերջինիս դին: | քաղաքացի Սարգսյանից | 1 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Առափի գյուղ 1-ին , թիվ 124 տուն | կանչ առանց հրդեհի | 22.02.2019 ժ.23:57 | 23.02.2019 ժ.00:50 | քաղաքացի Մկրտչյանից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Առափի գյուղի 1-ին փողոցի թիվ 124 տան տանիքում: | Ժ.23:58-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 48 ՀՓՋ-ի փրկարար փ/ծ ավագ սերժանտ Տոնոյանին, ժ.00:00-ին ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ ենթասպա Փոստոյանին, իսկ ժ.00:05-ին՝ ոստիկանության Ախուրյանի բաժնի ՕՀ ոստ. մայոր Երանոսյանին: Ժ.23:59-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.00:25-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.00:50-ին): Ժ.23:59-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից երկրորդ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.00:20-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.01:16-ին): Պարզվել է, որ Ֆատիմա Ստեփանյանին պատկանող թիվ 124 տան ծխատարից դուրս եկած ծուխը թողել է հրդեհի տպավորություն: | քաղաքացի Մկրտչյանից | 0 | 0 |
| Շիրակ | Քարաբերդ Գյուղի 6-րդ փողոցի թիվ 7 տան բակում | հրդեհ | 23.02.2019 ժ.00:20 | 24.02.2019 ժ.04:45 | քաղաքացի Վարդենյանից ահազանգ է ստացվել, որ Քարաբերդ գյուղում՝ ջրաղացի մոտակայքում, այրվում է կուտակված անասնակեր: | ժ.00:25-ին՝ ոստիկանության Անիի բաժնի ՕՀ ոստ. կապիտան Մանուկյանին, իսկ ժ.00:26-ին՝ ՄՀ և ՏԱՏ պետ Խաչատրյանին: Ժ.00:21-ին դեպքի վայր է մեկնել թիվ 51 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.00:42-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.04:45-ին):Ժ.00:55-ին թիվ 51 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ ավագ-լեյտենանտ Դարբինյանը պահանջել է օգնություն՝ (ջրատար): Ժ.00:56-ին դեպքի վայր է մեկնել թիվ 51 ՀՓՋ-ի եկրորդ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.01:14-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.04:20-ին): Հրդեհը մեկուսացվել է ժ.01:31-ին, մարվել՝ ժ.04:05-ին: Գյուղի 6-րդ փողոցի թիվ 7 տան (սեփա-կանատեր Պապ Պետրոսյան) բակում այրվել է մոտ 350 հակ պահեստավորված անասնակեր: | քաղաքացի Վարդենյանից | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | ք. Գյումրի. Կարսի խճ. 2, էլ. ենթակայանի մոտակայք | հրդեհ | 25.02.2019 ժ.18:43 | 25.02.2019 ժ.19:26 | քաղաքացի Մելքոնյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Կարսի խճուղու թիվ 2 հասցեում՝ էլ.ենթակայանի մոտակայքում այրվում է խոտածածկ տարածք: | Ժ.18:45-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.18:54-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.19:26-ին): Ժ.18:49-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Կումայրու բաժնի ՕՀ ոստ. մայոր Սարգսյանին, ժ.19:07-ին՝ ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Աղեկյանին: Հրդեհը մեկուսացվել է ժ.18:57-ին, մարվել՝ ժ.19:05-ին: Այրվել է մոտ 150 ք.մ խոտածածկույթ: | քաղաքացի Մելքոնյանից | 0 | 0 |
| Շիրակ | գ. Արևիկ | կանչ առանց հրդեհի | 26.02.2019 ժ.20:55 | 26.02.2019 ժ.21:33 | քաղաքացի Հովհաննիսյանից ահազանգ է ստացվել, որ Արևիկ գյուղում՝ շաքարի գործարանի մոտակայքում, այրվում են էլ. լարեր: | Ժ.20:55-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է թիվ 53 ՀՓՋ-ի հրշեջ-փրկարար փ/ծ ավագ սերժանտ Տիրատուրյանին, իսկ ժ.20:59-ին՝ ՄՃԿԿ կրտսեր հրահանգիչ փ/ծ ավագ ենթասպա Փոստոյանին: Ժ.20:57-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Ախուրյանի բաժնի ՕՀ ոստ. մայոր Չոմարյանին: Ժ.20:57-ին դեպքի վայր է մեկնել թիվ 53 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.21:05-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.21:33-ին): Տողազննման արդյունքում հրդեհի չի հայտնաբերվել: | քաղաքացի Հովհաննիսյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Արթիկ Անկախության փողոցի 31 շենքի 5-րդ բնակարան | փակ դուռ | 27.02.2019 ժ.21:15 | 27.02.2019 ժ.21:44 | քաղաքացի Բզնունուց ահազանգ է ստացվել, որ Անկախության փողոցի 31 շենքի 5-րդ բնակարանի դռան փականը խափանվել է, ինչից բնակարան մուտք գործելը դարձել է անհնարին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.21:16-ին դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.21:20-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.21:44-ին): Ժ.21:17-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Արթիկի բաժնի ՕՀ լեյտենանտ Հարությունյանին: Ժ.21:33-ին հրշեջ-փրկարարները բացել են Արփինե Բզնունու բնակարանի դուռը: | քաղաքացի Բզնունուց | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | Թավշուտ - Բերդաշեն ճանապարհ | արգելափակված ավտոմեքենա | 28.02.2019 ժ.04:49 | 28.02.2019 ժ.06:20 | քաղաքացի Չապանյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Թավշուտ - Բերդաշեն ճանապարհին ավտոմեքենան արգելափակվել է ձյան շերտում. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: | Ժ.04:51-ին դեպքի վայր է մեկնել թիվ 52 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկը, որը կանչի վայր է հասել ժ.05:20-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.06:20-ին): Ժ.04:53-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության Աշոցքի բաժնի ՕՀ ոստ. մայոր Գուրգենյանին: Ժ.05:40-ին հրշեջ-փրկարարներերն արգելափակումից դուրս են բերել ,VAZ 2106« մակնիշի 06SO926 պ/հ (վարորդ Մելիք Չապանյան, 3 ուղևոր) ավտոմեքենան: | քաղաքացի Չապանյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Ա.Խաչատրյան փողոցի թիվ 19 շենք | հսկվող կրակ | 28.02.2019 ժ.18:45 | 28.02.2019 ժ.19:21 | քաղաքացի Խաչատրյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Ա.Խաչատրյան փողոցի թիվ 19 շենքի նկուղից ծուխ է նկատվում: | Ժ.18:48-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.18:56-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.19:21-ին): Ժ.18:48-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել ոստիկանության Մուշի բաժնի ՕՀ ոստ. ավագ լեյտենանտ Երանոսյանին: Պարզվել է, որ նկուղում Սերգեյ Մկրտչյանի հսկողությամբ այրվում են մալուխներ: | քաղաքացի Խաչատրյանից | 0 | 0 |
| Շիրակ | ք. Գյումրի Գ.Նժդեհի փողոցի թիվ 7 հասցեում գտնվող թիվ 2 հանրակացարան | փլուզում | 28.02.2019 ժ.21:05 | 28.02.2019 ժ.22:47 | քաղաքացի Ավետիսյանից ահազանգ է ստացվել այն մասին, որ Գ.Նժդեհի փողոցի թիվ 7 հասցեում գտնվող թիվ 2 հանրակացարանի կիսաքանդ շենքում տեղի է ունեցել փլուզում. անհրաժետ է փրկարարների օգնություն: | Ժ.21:07-ին դեպքի վայր է մեկնել թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժ.21:11-ին (վերադարձ ՀՓՋ՝ ժ.22:47-ին): Ժ.21:09-ին ստացված տեղեկատվությունը փոխանցվել է մարզպետարանի քաղաքաշինության բաժնի պետ Մարգարյանին, ժ.21:10-ին՝ քաղաքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժ-նի պետ Հակոբյանին, իսկ ժ.21:14-ին՝ ոստիկանության Կումայրի բաժնի ՕՀ օգնական ոստ. ավագ ենթասպա Հարությունյանին և ՃԿԱԿ-ում ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի ներկայացուցիչ Մ.Հարությունյանին: Պարզվել է, որ մասամբ փլուզվել է 4-րդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքի դիմային հատվածի 2-րդ և 3-րդ հարկերի պատը (մոտ 18 ք.մ). տուժածներ չկան: Ժ. 23:12-ից թիվ 48 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ դեպքի վայրում իրականացնում է հերթապահություն: | քաղաքացի Ավետիսյանից | 0 | 0 |